

րեւոր դործերը Հայոց ձեռքին մէջ պիտի տեսնէր : Հայք յառաջ պիտի երթային եւ իրենց հաստատամտութեան, աշխատասիրութեան եւ հնարամտութեան շնորհիւ նոյն իսկ Օսմանեան կառավարութեան պիտի ծառայէին, իբր ամիրայ կամ սեղանաւոր, իբր խորհրդական, իրր գիւանագէտ, իբր նախարար, իբր պաշտօնեայ, եւայլն եւայլն :

Պոլսի Պատրիարքները՝ այս յաջողութիւններու մէջ պիտի զօրանային ներքնապէս եւ երթալով՝ Պատրիարքութիւնը անհրաժեշտ պէտք մը պիտի ըլլար Թուրքիոյ Հայոց համար, մանաւանդ այն քաղաքական փոփոխութիւններու հետեւանքով, որոնք, ինչպէս ըսինք վերը, Մայր Աթոռին վրայ ալ ազդեցին :

Եթէ Պոլսի Պատրիարքները ներքին կռիւներով չզբաղէին եւ Պատրիարքական Աթոռը խաղալիք չընէին ամէնէն ստորին կիրքերու, որոնց յիշատակութիւնը այնքան արատաւոր է որ՝ մարդ կ'ամհնայ ատոնց վրայ անգրադառնալու, աւելի բարձր դիրք մը պիտի չենէին Պոլսի Պատրիարքութեան համար՝ Հայ. Եկեղեցւոյ վարչութեան մէջ :

Որովհետեւ Պոլսի Պատրիարքութեան ներքին տկարութիւնները, Աթոռի կոսական Աթոռներու այլեւայլ պատճառներով տեսակ մը չէզոքացումը՝ այնպիսի տխուր վիճակի մը մէջ բերին հասուցին Հայոց Եկեղեցին որ՝ Եկեղեցին կառավարելու համար աշխարհականներ ոտքի ելան եւ հաստատեցին կամ հաստատել տուին Սահմանադրութիւնը : Ա՛լ մնացածը գիտենք :

.

Եթէ Պոլսի Պատրիարքութիւնը՝ իբր նոր կազմակերպութիւն պիտի զօրանար, եթէ իր դիրքը պիտի պահէր, եթէ իր գործունէութիւնը պիտի ունենար, իրեն պէտք էր նոր կալուած մը, նոր գետին մը : Այս գետինը գործնա՝ կ'ընդլայնուէր երկու-